



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՏՈՒՔ
ՔՐԻՍՏՈՆԵ



28
5-71

4 2001

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՄԱՍԻԱ



10054

28
5-71

4

ՊԱՏՈՒՔԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ

-
- Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԵՂՋԱՅԻ Դ. ՄՐԲԱՋԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱԼԵՄԻ
Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅԻ ՄՐԲԱՋԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼԽՈՅ
Տ. Տ. ՄԿՐՑՉԻ ԽՐԻՄԵԱՆ ՄՐԲԱՋԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
-

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ԿՈՍՏԱՆԴՐՈՒՊՈԼԻՍ

— 1871 —

11323

ՊԱՌԱՄԻՋ ՊԱՌԱՋ

— 100 —

ՃԵՐԱՌԱՋՎՐԱՋԱՀ 4
ԷԽԱՋԱԴԻՆ 4 ՅԱՐՋԱՋ 2 2
ԵԽՈՒ ԵԽՈՒՍՍ ԿՈՎՎՐԱՋԱՀ
ԸԱՌԱՋՎՐԱՋ 4 ԵԽԵԳՎԱՋՎՐԱՋԱՀ 4
ԷԽԱՋԱԴԻՆ ՅԱՅՋԱՀ 2 2
ՎԱՐԴԱՐԱՋՎՐԱՋ
ԾՈՒՅՈՒ 4 ՃԵՐԱՌԱՋՎՐԱՋԱՀ 4
ՃՈՎՎՐԱՋ ՃԵՐԱՌԱՋՎՐԱՋԱՀ 2 2
ՎԱՐԴԱՐԱՋՎՐԱՋ

2290

40

ՃԵՐԱՌԱՋՎՐԱՋ
ՎԱՐԴԱՐԱՋՎՐԱՋ

— 1131 —

Ա Զ Դ

Սիրելի Աղդիս պատանեկաց համար՝
որոնք գեռ նոր մտած են ընթերցանու-
թեան և ուսման պարտէզը, շատ կը
բաղձայի գրաւոր խրատական տետրակ
մը սահմանել, որ պարունակէ Քրիստո-
ոփ տեառն մերոյ պատուէրները. և պա-
տանիք կարդալով զայն, Քրիստոսի սի-
րով վառին, և ի մանկութենէ սկսին
վերինը խորհիլ. ու քանի որ մեծնան,
բարի վարքով և առաքինի գործերով
դարդարուին, և իրենց ընտանեաց ու
Ազգին պարծանք ըլլան։ Այս փոքրիկ
տետրակը այդ նպատակաւ շարադրել
ձեռնարկեցի, պարզ լեզուաւ, որ ամէ-
նուն դիւրահասկանալի ըլլայ։ Կը խընդ-
րեմ որ բարեջան վարժապետները իրենց
ազգու խրատներովը աւելի ճոխացնեն
զայս յօդուտ հայ պատանեկաց։

ԳՐԻԳՈՐ Վ. ՄԻՆԹԱՆՑԵՍԻՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԱՑ

Q U S T H E P

ΦΕΤΙΣΟΥΡ

Հ. Ո՞վ ստեղծեց աշխարհս

Պ. Ամենակարսղն Ասառած վեց տ-
չուր մէջ ոչ բնչէ ստեղծեայ երկինքն ու
երկիրը, և ի՞նչ որ երկնի ու երկիրի մէջ
արարածներ կան: ու ուստի Ե

Հ. Առաջին օրը ի՞նչ սաեղծեց

Պ. Առաջին օրը լցուի սահզծեց, և
խաւարէն զատեց՝ որ լցու ցորեկ և խա-
ւարը գիշեր եղաւ :

Հ. ԵՐԿՐՈՐԴ օՐԸ Է՞՞Ն սաեղծեց .

Պ. Երկրորդ օրը հաստատութիւնը՝
այսինքն երկնի երեսի կամարը հաստա-
տեց, ու երկնի ջուրերը երկրիս ջուրե-
րէն դատեց:

Հ. ԵՐԵՄՈՒԴ օՐԸ Ի՞նչ ստեղծեց .

Պ. Երբարդ օրը ծովը ցամաքին բաժ-
նեց, ու հրաման ըրպաւ որ ցամաքին մէջ
խռաւեր՝ ծաղիկներ և ամեն կերպ ծա-
կեր բռամին:

Հ. Չորրորդ օրը ի՞նչ ստեղծեց :

Պ. Չորրորդ օրը՝ արեն ու լուսինը և բոլոր աստղերը հաստատեց երկնքը, որ ցողեկ ու գիշեր երկիրս լուսաւորեն, այլ և ժամանակ՝ օր՝ տարի և անոր չորս եղանակները որոշեն :

Հ. Հինգերորդ օրը ի՞նչ ստեղծեց :

Պ. Հինգերորդ օրը ձիներն ու թըռչուններն ստեղծեց, և օրհնեց զանոնք որ աճին ու շատնպն ջուրին և օդին մէջ :

Հ. Վեցերորդ օրը ի՞նչ ստեղծեց :

Պ. Վեցերորդ օրը ամէն կերպ չորքոտանիներ և անառուններ ստեղծեց . ամենէն եաքն ալ մարդը ստեղծեց իր պատկերին նման, և անունը Ադամ դըրսւ :

Հ. Եօթներորդ օրը ի՞նչ ըրաւ :

Պ. Եօթներորդ օրը գագարեցաւ իր ամէն դորձերէն, և օրհնեց այն օրը, և ուզեց որ իրեն համար սուրբ պահուի :

Հ. Աստուած այս աշխարհո՞ւ և այս բարութիւնները որի համար ստեղծեց :

Պ. Մեղքի համար ստեղծեց, որ անոր առած պարդեները վայելինք ու դիմքը փսուալորենք :

Հ. Մարդկային բնութիւնը որի՞ համար ստեղծեց :

Պ. Մարդկային բնութիւնը միայն իւրեն փառաբանիչ ստեղծեց, որ քանի կենդանի եմք՝ բարի և առաքինի վարքով և կատարեալ աստուածաշուառ թեամբ զարդանամք . և այս կեանքէն յետոյ սուրբ արքոյութեան փառացը համիմք, որ կորածած հրեշտակներուն տեղը լիցուննեմք . և իւր ամենօր հնեալ անունը փառաւորեմք, յաւիտեան :

Հ. Այս ցաւալից աշխարհը ինչո՞ւ եւ կերեմք, և ի՞նչ բնելու եմք :

Պ. Մեր սկզբանական մեղացը համար, ոյոյ արտամութեան աշխարհը վանառեր եմք, վասն զի մամեզաթեան վիճակի մէջ եղած ժամանակիս, զաւարձալի պարտէզքի մէջ էինք . բայց երբ մեղանացինք՝ այն անմահական բնուիարանէն գրկուեցանք, վասնորայ հարկէ որ ամէն կերպ նեղութիւնները համբերութեամք կրեմք, Աստուածոյ պատալրանքը սիրով կատառեմք, մեր հոգին՝ մարմինք, սիրտը՝ մեղքէն հեռու պահեմք, որ Քրիստոսի չարչարանաց միջնորդութեամք յաւիտեական փառացը համիմք :

Հ. Անանիկ է նէ այս աշխարհին վաճառչութեանը համար չենք ստեղծուած :

Պ. Այս, սիրելի, ըբլայ որ քու սէրդրուրովին այս անցաւոր աշխարհին տառ, և անոր սուտ վայելչութեանը խարուխո, ինչու որ կամ ուշ կամ շուտ օր մը քու կեանքդ պիտի հատնի, և այս աշխարհին մէջ ունեցածներէդ. և բոլոր սիրական ներէդ պիտի զատուխո, և ինչնէս մերկ եկար աշխարհ, անանիկ ալ մերկ պիտի ելլես աշխարհէս . ուրեմն ջանք ըրէ, սիրելի, որ աստուածային սիրովը վասիս և Քրիստոսի հետ երկնային կեանքը վայելիս :

Հ. Քանի՞ թշնամի ունինք, որ երկնից հոգեւոր փառքերէն կը զրկեն զմեզ: Պ. Երեք թշնամի ունինք, մէկը մեր մարմնոյն չար կիրքերը . երկրորդ՝ աշխարհիս երկելի փառքերը, մեծութիւնները . երրորդ՝ չար սատանայն: Ահա այս երեք թշնամին միշտ կը ջանան որ մնդի հոգեւոր փառաց զրկեն, մեղի միշտ սխալեցնել կ'աշխատին, երբ որ մերսէրը բոլրովին ասոնց ձեռքը տանք: Ասոր համար պէտք է որ մենք ասոնց յազմենք, և հոգեւոր բաղձանքնիս և

եռամբնիս սրտերնուս մէջը բարբոքելով մարմնաւոր մեղանչական կիրքերը զապինք, որ Աստուծոյ սիրելի ըլլանք ու լուսեղին պասկ առնենք: Վասն զի Պօղոս տուաքեալը կը քարողէ «Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ՝ և հոգի ցանկայ հակառակ մարմնոյ . Գաղ. Ե. 17 »: Եւ իւր սէրը բոլրովին աշխարհիս տըւող մարդոց տես ի՞նչ կ'ըսէ Յակոբոս « Ենացողնե՞ր : չէ՞ք գիտեր որ աշխարհիս սէրը Աստուծոյ թշնամութիւնէ, ինչու որ՝ ով որ աշխարհս սիրել ուղէ՝ իր անձը Աստուծոյ թշնամի կ'ըսէ . Յակ. Կաթ. Պ. կ. »: Զար սատանային թըշնամնաթեանը համար Պետրոս կը քարողէ «Արթուն կացէ՞ք, հսկումըրէ՞ք, ինչու որ ձեր թշնամի սատանան առիւծի պէս կը պօռայ կը վիստուէ, կը նայի թէ ով պիտի կլէ : Ա. Պետ. Բ. 8. »:

Հ. Այս երեք գլխաւոր թշնամեաց ի՞նչ կերպով յաղթելուէ :

Պ. Նախ Աստուծմէ չորրհ պիտի խընդրես, որ քեզի զօրացունէ: Երկրորդ՝ Եթէ մարմնոյդ յազթել կ'ուղես՝ անոր ամէն կամքը մի՛ կատարեր, և քու սրտի փափաքը Աստուծոյ վրայ շատցուը: Եր-

բորգ՝ աշխալինիս յաղթեն կ'ուզեմ՝ քու
սրակդ փափաքը՝ սէրը՝ երկնային փառ
քերտն տու՛ր, անցաւոր բաներու վրայ
սէր մի՛ ունենար, միշտ վեղինը խորհէ՛,
և աշխարհիս մէջը ո՛րշափ փառաց մեւ
ծութեան համնիս՝ իւնարէ եղիր. Հու-
զեազը մարքէդ մի՛ համեր. ինչպէս որ
սուրբ Գիրքը կ'ըսէ՛. « Արշափ մեծու-
թեան համնիս՝ անձգ խոնարհութեան
մէջ պահէ՛, որ Աստածմէ չնորհ գլու-
նես. Առակ. ԺԶ. 4. » : Չորբարդ՝ օս-
տանացին եթէ յաղթեն կ'ուզես՝ ազօթ-
քով և խոնարհութիւնով կը յաղթես :

Հ. Ճշմարիտե կատարեալ աստուած-
սիլութիւնը ո՞րնէ, և ի՞նչ բանով կ'ըլ-
լայ :

Պ. Երկու բանով կ'ըլլայ. առաջին՝
Աստուծոյ պատիրանները կատարելով,
Երկրորդ՝ ընկերը անձին պէս սիրելով.
այսովէս կը պատուիրէ Քրիստոս :

Հ. Երկու քէնալ վկայութիւն կ'ուզեմ:

Պ. Ահա՛ Յովհաննէս աւետարանիշը
ԺԻ. ԳԼ. 21 Համարը այսովէս դրած է,
որ Քրիստոս կը պատուիրէ և մ'որ իմ
պատուիրաններս կը պահէ՛, այն է որ կը
սիրէ զիս. Մ'որ զիս կը սիրէ՛ ևս ալ

զայն կը սիրեմ՝ և իմ ահեսութեանս ար-
ժանի կը ընեմ՝ ։ Դարձեալ 32 համա-
րը կը պատուիրէ Քրիստոս. « Ա՛վ որ
զիս կը սիրէ՝ իմ խօսքս խոզ պահէ՛, իմ
երկնաւոր հայրս ու զայն կը սիրէ՛, որ
անոր պիտի դանք ու սրախն մէջ ընա-
կինք ։ :

Հ. Երկրորդին վկայութիւնն ալ խօ-
սէ :

Պ. Ահա՛ սուրբ Յովհաննէս աւետա-
րանիշը կը պատուիրէ. « Ա՛վ որ կ'ըսէ
զԱստուած կը սիրեմ և իւր ընկերը կ'ա-
նարդէ տուաէ. վասն զի ա՛ն որ եղ-
բայրը կը աեսնէ ու չի սիրէր, զԱստ-
ուած որ չի տեսներ՝ ի՞նչպէս կրնայ սի-
րել. Յովլ. Ա. կաթ. 7. 20 » : Եւ այս-
պէս պատուէր ունիմք ի Քրիստոսէ. « Ա՛վ որ զԱստուած կը սիրէ՛ իւր եղբայ-
րն ալ սիստի սիրէ ։ Երջանիկ Պօղոսն
ալ այսպէս կը պատուիրէ. « Աստուծոյ
նմանող եղիք սիրելի զաւակի պէս. և
միմեանց հետ սիրով եղիք. ինչպէս որ
Քրիստոս մեզի սիրեց, և իւր անձը մե-
զի համար Պատարագ ըրբաւ. Եպիս. Ե.
4. » :

Հ. Քրիստոս ՍԱւետարանին մէջ յա-

տուել նոր պատուէր մը ունի՞ որ ամէն քրիստոնեայ պարտաւորեն կատարելու :

Պ. Այս', « Նոր պատուէր մը կուտամ ձեզի , կը աէ Քրիստոս , որ մէկզմէկ սիրէք . ինչպէս որ ևս ալ ձեզ սիրեցի՝ անանի ալ գուք դիբար պիտի սիրէք . Յօվ . ԺԴ. 34 » : « Մանաւանդ ձեր ինձի աշակերտող , ինձի հաւատացող ըլլալիդ ամէնը ասովի պիտի ճանճան . երբ որ զիբար սիրէք . Նոյն . ՅՅ. հաւատիր » : Ուրեմն ինչպէս որ քրիստոնէին տրտաքին նշանը երեսը խաչակնքէն է , այսպէս ալ ներքին նշանը եղ բայրսիրութիւնն է , այն նշանը չունեցողը ճշմարիտ քրիստոնեայ է :

Հ. Ճշմարիտ եղբայրնիրութեան նըշանները որո՞նք են :

Պ. Սըբազան Պօղոս առաքեալլը գեղեցիկ բացատրեր է Ա. Կոր . ԺԴ. և համարէն մինչև 8 համարը : « Կատարեալ սէր աւնեցողը ամէն բանին կը համբերէ . ամէնուն հետ անուշ կը վարուի , մէկուն նախանձութիւն չըներ . փառափիրութիւնն հպարտաւթիւն չունի . մէկուն հետ չը խոռովիր . մէկուն չար չուզեր . մինակ երեն բարութիւնը՝ իւր օգուտը

չի խնդրեր . հապա ընկերին ալ բարի կը խնդրէ : և միշտ օգնել կը ջանայ . սէր անեցողը մէկուն անիբաւաւթիւն չար մը պատահի նէ , չի ու բախանար . հաւատի ուր որ ճշմարտութիւն՝ ուղղութիւն , բարեգործութիւն տեսնայ՝ ու բախութեամբ կը լրցուի . ընկերին պակասութեամբ սխալամացը կը համբերէ , և կորեացը չափ ծածկել կտշխատի . ինչքըն և ընկերն ամէն բարիքները ընդունելու յոյս ունի , և միշտ կը խնդրէ Աստուծմէ : Ահա հոգւով պրովլ յայտնուած եղբայրսիրութեան պարագայներուն գլխաւորները ասոնք են :

Հ. Ապրդ մը մեզի թշնամութիւն կոմինչ և իցէ հակառակ բան մը ընէ նէ առնոր փոխարէնը ի՞նչ ընել պէտք է :

Պ. Անոր ըրած թշնամութիւնը փոխարէն բարերարութիւն ընելու է , որ գուք Քրիստոսի պատուէրը կատարելով մեծ բարեգործութիւն ըրած կը լուս . և թշնամիթ ալ պատիքը կաւելցունես . ինչպէս որ Պօղոս կը պատուիրէ . Եթէ թշնամիդ անօթի է՝ հաց տուր անոր + եթէ ծարաւ է՝ ջուր , այս ընելով կրակի կոյցեր կը լեցանես անոր գլխուն

վրայ . որուն իսուսադէնը Աստուծմէ բաշ-
րութիւն կառնես . Հռով . ԺԲ . 20 : Այս
է քրիստոնէին իր թշնամին յաղթելու
կանոնը . ինչպէս որ քրիստոս մեր տէրը
այսպէս ըրաւ , և մեղիալ այսպէս պատ-
ուիրեց : Մատթ . Ե . 44 :

Հ . Ընկերին բարկացող՝ անարդ խօս-
քեր զրուցող մարդուն ի՞նչ կը պատ-
ուիրէ քրիստոս :

Պ . Ով որ իր եղբօրը զորտեղը բար-
կանայ և նախատական խօսքեր խօսի ,
պարագան ըլլայ , կըսէ , դատաստա-
նին ու գժոխքին կրակին . Մատ . Ե . 22 :
Հապա անոնք՝ որ գժոխային բերանով
սարսափելի հայհոյութիւններ ընեն նէ՝
անոնց գլուխը ի՞նչ պիտի դոյ թո՞ղ ի-
րենք մոման , որ Քրիստոսի պատուէ-
րին դէմ գործքին՝ պատասխան պիտի
տան :

Հ . Քանի՞ մեղք կայ որոնց Աստուծած
թովութիւն չի տար :

Պ . Երկու , մէկմը Հոդւոյն որբոյ հայ-
հոյութիւնը՝ ինչպէս որ Մատթ . ԺԲ . 31 .
մէջ մ'ալ մեղի դէմ յանցանք մը ընողը ,
երբ որ մեղի մեղայ ըսէ ու անոր յան-
ցանքին սբանց թովութիւն չտանք .

Աստուծմէ թովութիւն չենք կրնար դժու-
նել . Մատ . ԺԲ . 23 համարէն մինչեւ
33 համարը , վասն զի երբ մեզի յանցա-
ւոր կտնուալներուն յանցանքին թոյրու-
թիւն չտանք , ամէն անդամ աէրունա-
կան աղօթքն ըսերնուս , զԱստուծած խա-
բած կըլլանք . այս խօսքավը « Եւ թո՞ղ
մեղ զպարախ մեր . որպէս և մեք թո-
զումք մերոց պարագանաց » . որ ըսել
է մեր մեղացը թոյրութիւն առ'ըր « ինչ-
պէս որ մենք ալ մեր յանցաւորներուն
թոյրութիւն կուտամք : Վասնորոյ Քր-
իստոս մեղի այս աղօթքը սովորեցունե-
լէն . յեայ . կը պատուիրէ թէ՝ երբ դո՞ք
մարդկան յանցանքը չթողաւք՝ ձեր երկ-
նաւոր հայրն ալ ձեր յանցանքը չժաղաք:
Մատթ . Զ . 45 : Մարկ . ԺԱ . 25 :

Հ . Հոգւոյն սբբոյ գէմ հայհոյութիւ-
նըն ի՞նչ է :

Պ . Հոգւոյն սբբոյ զօրութեամբ եղած
բանին Հաւատալ , սուտ հանել . երկ-
րորդ՝ ճշմարտութիւնը դիսնալ՝ չար
նախանձով ստել . երբարդ՝ Աստուծոյ
զօրութեամբը եղած հրաշքը՝ սատանա-
յին տալ . ինչպէս որ չարնախանձով լըց-
ուած փարիսեցիները . Քրիստոսի սքան-

չեկի հրաշքները տեսան նէ ։ Բեհեղզեմ
բողոք՝ այսինքն ոտտանային իշխանու-
թեամբը ։ կընէ ըսին ։ Մատ ։ ԺՅ. 24 ։

Հ. Քրիստոս Ա. Աւետարանին մէջը կը
պատուիրէ որ՝ եթէ աչքդ կամ ձեռքը
քեզ գոյթակղեցունէ, այսինքն մեղաց
պատճառ ըլլան՝ վրցուր անի, ինչու որ
աղէկ է քեզի մէկ անդամդ կորսուի,
քան թէ ամէն մարմինդ դժոխքը եր-
թայ ։ Այս բանը ի՞նչպէս կրնայ ընել
մարդո ։ Մատ ։ Ե. 29 ։

Պ. Այս զորցեցով Քրիստոս մեզի բա-
րեկամսաբար իմացունել կուզէ, սիրելի,
թէ ի՞նչպէս անտանելի սաստիկ է դը-
ժօխքին տանջանքը ու ցաւը, տսակ ը-
սել կուզէ թէ աչքդ հանելու կամ ձեռ-
քը կորելու ցաւը շատ քիչ է դժոխ-
քին ցաւերէն ։ Ահա՝ այս խօսքը մոքեր-
նիս բերելով ո՛ր զդայարանքով մեղան-
չելու կամք լինեմք նէ՝ պէտք է որ նոյն
կամքը մեղնէ վրցունենք մէկդի ձը-
գերք ։ Մասմ ։ Ե. 29 ։

Հ. Մարգո սովորութիւն ըրած մեղ-
քերը ի՞նչ կերպով կրնայ թողուլ ։

Պ. Ամէն սովորութիւն եղած բանը
շուտով վերջ ընելը դժուարէ ։ բայց կա-

ապարեալ պրոֆիւ Աստու ծոյ դառնաս Աս-
տումէ օդնութիւն կառնես, մանա-
ւանդ մահաւան օրդ դատաստանին օրը,
երկնային անմահական փառքը, դժո-
խային սոսկալի տանջանքը շատ ժամա-
նակ միտքդ բերես նէ՝ շուտով քու կամ-
քը նոյն չար սովորութիւններէն հեռա-
ցունելու կարող կըլլաս չնորհօքն Քրիս-
տոսի ։ ինչպէս որ սոսկը դիրքը կը պատ-
ուիրէ և որդեակ վախճանդ մոքէդ մի՛
հանելու որ մեղքէն ազատ մնաս ։ Ժող.
Է. 40 ։

Հ. Քրիստոս ո՞ր ծառան շատ կը սի-
րէ և անոր սրտին մէջ կը ընակի ։

Պ. Ո՛վ որ հեզ և խոնարհ է և որոն
սիրաը մաքուրէ նէ՝ անոր սիրաը կը ըլ-
նակի, և հոն հանդ խստ կըլլայ ։ ինչպէս
որ ի՞նքը ըսերէ ։ Ես ո՞ւր կը հանդըս-
տանամ, ուրիշ տեղ չէ՝ մանաւանդ հե-
ղերուն ու խոնարհներուն մէջ ։ Եսայ ։
ԿԶ. 2 ։ Եւ Քրիստոս իր անձը մեզի օրի-
նակ կուտայ այսպէս պատուիրելով
։ ինձմէ սովորեցէ՛ք, նայեցէ՛ք, ի՞նչպէս
հեզ ու խոնարհ եմ ։ Մատ ։ ԺԱ. 29 ։
։ Եւ ասկէ աւելի խոնարհութիւն շը-
յար որ՝ աէրը ծառային ոտքը լուանայ ։
Ցով ։ ԺԴ. Ծ. ։

Հ. Առաջ ծոյ երեսէն ինկած առելի
ժառան ո՞րն է :

Պ. Հպարտ ամբարտաւան մորդն է ,
զըր ամենելին Աստուած չի պիրէր . և
միշտ անոնց հակառակն է , ինչպէս որ Ա.
Գիրքը կըսէ ։ տէրը ամբարտաւաննե-
րուն հակառակն է , իր չնորհքը խոնարհ-
ներուն կրուտոյ : Առակ . Պ. Յն » :

Ուրեմն շատ սոսկարու ու վախճառու է
հպարտութեան ախատէն . վասն դի Աստ-
ուած մարդուս հակառակ ըլլայ նէ , ու-
ղիշ ո՞ւրկէ օգնութիւն պիտի գտնէ :

Հ. Խոնարհութիւնը ինչ՞ով կըլլայ և
ի՞նչ նշան տնի :

Պ. Խոնարհութիւնը մասնաւոր նշան-
ներ շատ ունի . բայց գլխաւորապէս այս
երկու բանափ կըլլայ : Նոյն թէ որ Տէկը
քու ըրած բարի գործերդ . կամ ինչ և ի-
ցէ քաջութիւնդ . պատմելով քեզի դո-
վինէ , քա տնձդ նոյն դուրս թիւնը ու-
նարժան համարելով . մի՛ հպարտանար .
մասնելով որ փառքը դովան թիւնը Աս-
տուծոյ կը վայպէ : Վասն զի՞ ի՞նչ որ ու-
նինք Աստուծմէ առ երինք . և ի՞նչ բու-
րելորդութիւն ար բնինք՝ պիտի ըսկմք
թէ Աստուծոյ սնովիտան ծառան եմք .

Անդի պարտք եղածը ըրինք : Այսպէս
կը պատուիրէ Քրիստոս . Ղուկ . ԺԷ. 10 :

Հ. Երկրորդ նշանը ի՞նչ է :

Պ. Խոնարհութեան երկրորդ նշանն
այս է . մէկը յանցանքդ երեսիդ տալով
քեզ նախատէ նէ՝ քու զգաստութեանդ
համար ըլլալը գիտնալով . ամենելին պի-
տի չբարկանաս : Ահա՝ այս երկու նշանը
ունեցողն է ճշմարիտ խոնարհը . այսպի-
սի խոնարհներուն վրայ երանութիւն
կուտայ Քրիստոս . Մատ . Ե. 5. որսնք
Երկինքը բարձրացունել կը խոստանայ :
Մատ . ԺԸ. 4. ԻԳ. 12 :

Հ. Հպարտ մարդը ի՞նչ նշան ունի :

Պ. Այս երկու նշանը ունիւ Նոխ կու-
պէ որ ինքը ամենէն բարձր երենայ , ու-
րեշը կանարդէ , իր անձը կը դովէ և կը
բարձրացունէ : Երկրորդ զի՞նքը զգաս-
տացունելու համար՝ իր յանցանքը երե-
սին տառնէ՝ ստատիկ կը բարկունայ , ու
քեզի հետ կը խռովի . ո՞չ խրատ մոփիկ
կընէ՝ ո՞չ պատուերի . և ո՞չ մէկուն կը հը-
նողանդի . չի մտածեր որ ստանան յա-
ռաջ հրեշտակ էր՝ հպարտութեան պատ-
ճառառ . երկինքէն վար ինկաւ . դժոխու-
մն եղաւ . ինքնի ալ ոյնողէս պիտի ըլ-

զայ՝ եթի որ Քրիստոսի պատուէրին չլ հըս
նազմագի ։ Առաջ. Ժ. 48 :

Հ. Քրիստոս Ս. Աւետորանին մէջը կը
պատուէ թէ ըստն ճամբարէն գացաղը կո-
րուստը կերթնց ։ Նեղ ճամբարէն գացո-
ղը քրիստուն կը դանէ ։ Ի՞նչպէս ճամ-
բայ են առնօք ։ և ի՞նչ ըսել կուզէ Քր-
իստոս :

Պ. Լայն ճամբան այնէ որ մարդ մը
Քրիստոսի օրինաց և պատուիրանաց
չնազմագի լովի իր կամքը իր բաղձանքը
կը պաշտէ ։ և ամէն կրովմանէ իր մարմի-
նը հանգիստ ընելու ջանք կընէ ։ և իւր
մէրը բազմութին աշխարհին կուսաց ։ Նեղ
ճամբան այնէ ։ որ մարդու Աստուծոյ
պատուիրանքը սիրով կատարելու ջանք
կընէ ։ և ամէն կողմանէ իր մարմինը կը
նեղէ ։ և հազ ևսոր աշխատութիւններով
և շատ տեսակ բարեգործութիւններով
իր հագին կը զարդարէ ։ Մատ. Ե. 43 :

Հ. Քրիստոսի ետևէն երթալաւ ին-
չով արժանի կըլլանք :

Պ. Խաչով որ ըսելէ չարչարանքով
ինչպէս որ Քրիստոս ինքը կը պատուիրէ
Մատ. Ժ. 38 ։ Ավով իր խաչը չտունէ և
իմ ետևէս չդայնէ ։ ինձի արժանի չե :

Ուրեմն ամէն մարդ՝ իր չարչարանքնե-
ղութեան խաչը սիրով և համբերու-
թեամբ պիտի տանի որ Քրիստոսի ար-
ժանի ըլլայ ։ և այս բարոյական խաչը
այս չորս առաքենութեամբը կը կազմուի.
սիրով խոնարհութեամբ՝ համբերու-
թեամբ՝ ներողութեամբ :

Հ. Ս. Պատարագը ի՞նչ խորհուրդ ու-
նի և ո՞վ որպիցուց մեղի :

Պ. Ս. Պատարագը Քրիստոսի խաչին
վերայ իւր առաք հոգին աւանդելու խոր-
հուրդը ունի, և Քրիստոս ինքը որպից-
ցուց իւր սիրելի առաքեալներուն Սիօն
վերնատանը մէջ ։ Մատ. ԻԶ. 26 ։ Եւ հը-
րաման ըրաւ որ նոյն խորհուրդը միշտ
կատարեն ։ ուստի իրենք ալ ամէն օր կը
կատարեին ։ Գործ. Բ. 42. 46 ։ Որոց օ-
րինակաւ և Քրիստոսի պատուէրովը ա-
մէն քրիստոնէից աղդք այս սուրբ խոր-
հուրդը միշտ կատարելու պարտաւոր են
մինչեւ ի գալուստ Քրիստոսի ։ Ա. Կոր-
ժը. 26 :

Հ. Քրիստոսի մորմինը և արխոնը ար-
ժանաւորութեամբ ճաշակողը ի՞նչ փառք
կառնէ Աստուծունէ :

Պ. Յաւիտենական փառքին արժանի կըլլայ . և Քրիստոս սէրը իր սիրաը կը բնակի . որով Քրիստոսի հետ կը միանայ . ինչպէս որ ինքը ըսեր է . թով . Զ. 55 . « Ով որ իմ մարմինս կը ճաշակէ . և իմ արիւնս կըմպէ՝ յաւիտենական կեանք կունենայ , ես ալ դատաստանին օրը յարութիւն պիտի տամ անոր . . . 57 Համարը դարձեալ կըսէ . « որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ յիս բնակեայի և ես ինմա » . Եւ արժանաւոր հաղորդութեամբ աստուածային սէրը սրտերնուս մէջ կը բորբոքի , վնասակար չար կիրքերը կը ջնջին , հոգեւոր բաղծանքնիս կը շատնայ , և այլ բաղում բարութիւն կըստանամք չնորհօքն Քրիստոսի :

Հ. Քրիստոսի մարմինը անարժանութեամբ ճաշակողը ի՞նչ պատիժ կառնէ Աստուծմէ :

Պ. Ասոր Համար արուելիք սոսկալի պատիմները բացայաց գրած է Պօղոս . Ա. Կոր . ԺԱ. 27 . և կը պատուիրէ այսպէս . « Այսուհետեւ ո՛վ որ Քրիստոսի մարմինը անարժանութեամբ ճաշակէ , և սուրբ արիւնը անարժանութեամբ ըմպէ , պարտաւոր է Քրիստոսի մարմնոյ և

արեան » : Դարձեալ 29 Համարը կը պատուիրէ . « Ո՛վ որ անարժանութեամբ ճաշակէ՝ իր անձին դատաստանը կը ճաշակէ » : Ըսել կամի թէ դատաստանին օրը պարտական կըլլայ Քրիստոսի : Եւ « այս բանին համար շատ հիւանդութիւններ ցաւեր պատահած են ձեզի և շատերն ալ ձեր մէջէն մեռած են . կ'ըսէ նոյն . 30 : Ուրեմն մեծ զգուշութիւն ու պատրաստութիւն ունեցիր սիրելին . ահրւ՝ երկիւղիւ՝ սաղմոսերդութեամբ՝ աղօթիւք՝ և շատ բարեգործութեամբ՝ քու սիրտդ մաքրէ՝ զարդարէ՝ . որ այս առաքելցն ըսած պատիմներէն ազատ մնառ , և Ա. Հաղորդութեան արժանաւոր կերպով մերձենաս :

Հ. Ա. Հաղորդութիւնը արժանաւուրութեամբ ճաշակելու ի՞նչ պատրաստութիւն պէտք է :

Պ. Նախ ունենալու եմք կատարեալ Հաւատք , երկիւղածութիւն , մաքրութիւն սրտի : Երկրորդ քահանային պատուիրած ապաշխարանքը սիրով կատարելու եմք , և Ա. Հաղորդութեան մերձենալու ժամանակնիւ՝ այնպէս փափառով և ջերմեռանդութեամբ պիտի մեր-

տուծմէ զատողը միայն մեղքն է . ինչ
պէս որ Եսայի մարդարէն կը քարոզէ .
Այլ մեղք ձեր որոշն ի մէջ ձեր՝ և ի
մէջ Աստուծոյ : Եսայ . Ծթա . 2:

Հ. Քրիստոս լերանը վրայ քարոզու-
թիւն տուած ժամանակը , քանի՛ կերպ
երանութիւն տուաւ մարդկան :

Պ. Ութը կերպ երանութիւն տուաւ :
Երանի՛ , ըստ , հոգւով աղքատ եղող-
ներուն՝ ինչու որ անոնց է Երկինքին ար-
քայութիւնը : Երանի՛ սգաւորներուն՝
ինչու որ անոնք պիտի մխիթարուին : Ե-
րանի՛ խոնարհներուն՝ որ անոնք հան-
գիստ պիտի վայելն երկիրը : Երանի՛ որ
անօթի ու ծարաւ են արդարութեան հա-
մար՝ որ անոնք պիտի կշամանան : Երա-
նի՛ ողորմանծներուն՝ որ անոնք ողորմու-
թիւն պիտի գանեն : Երանի՛ անոնց որ
սրտով սուրբ են՝ որ անոնք Աստուած-
պիտի տեսնեն : Երանի՛ խաղաղութիւն
ընողներուն՝ որ անոնք որդի Աստուծոյ
պիտի կոչուին : Երանի՛ որ հալածուած-
են արդարութեան համար՝ որ անոնց է
Երկինքին արքայութիւնը : Մատ . Ե . 3 :

Հ. Հոգւով աղքատ ըլլալը ի՞նչ է :

Պ. Հոգւով աղքատ ըլլալը այն է :

ձենանք , որ սրտերնուս փափաքէն աշ-
քերնէս արցունք թափի , այսպէս մտա-
ծելով որ այսօր երկնի և երկրի ստեղծող
Տէր Յիսուսը խմ սիրտս պիտի իջնայ , ես
ալ անոր հետ պիտի միաւորիմ . ինչու որ
նոյն հաղորդութիւնը հաց և գինի կե-
րեւայ , բայց Քրիստոսի խօսքովը կա-
տարեալ կը հաւատամք թէ՝ իւր ճշմա-
րիտ մարմինն և արիւնն է : Երբորդ՝ ե-
թէ մէկուն հետ խռովութիւն մը ունիս՝
կամմէկը քեզի հետ խռովութիւն մը ու-
նի , հետաք պիտի հաշտուիս . ահա՝ այս
է արժանաւորութեամբ հաղորդուելու
կերպը : Մատ . Ե . 23 :

Հ. Ա. Հաղորդութիւնը ճաշակելէն
յետոյ ի՞նչ ընելու է :

Պ. Այնուհետև պէտք է որ Աստու-
ծոյ մեծապէս գոհութիւն և փառաբա-
նութիւն տաս՝ որ քեզի արժանի ըրտւ
իւր Ա. Հաղորդութեան : Մեծ ուրախու-
թիւն պիտի ունենաս՝ որ Աստուած քե-
զի հետ միաւորեր է . մնանաւանդ՝ մեծ
Երկիւզ պիտի ունենաս զգուշութիւն ը-
նելով , չըլլայ որ կրկին ծանր մեղանչե-
րով՝ գու Աստուծմէ հեռանաս՝ Աստ-
ուած ալ քեզմէ . ինչու որ մեղ Անս-

որ մարդու աշխարհիս մէջ ունեցած բարիքները՝ և բոլոր փառքը՝ մեծութիւնը՝ ընդունայն ըլլալը քաջ ճանաշելով, իւր սէրը՝ յօյսը՝ առ Աստուած և առ Երկնայինս կուտայ . և այնպէս խոնարհութիւն կունենայ որ ո՞չ կը բարձրամտի և ո՞չ կը հպարտանայ . Պօղոս առաքելոյն պատուիրանացը հնազանդելով, ինչպէս որ Տիմոթէոսին կը պատուիրէ . Մեծատուններուն պատուէր տուր, կրսէ, չըլլայ որ հպարտանան, և մնոտի մեծութեան վրայ յոյս չդնեն, այլ միայն Աստուծոյ . առատաձեռն ըլլան, բարի գործերով մեծնան, որ ճշմարիտ կեանքը ձեռք բերելու կարող ըլլան . : Տիմ. Ք. 17. 18. 19. : Այսպէս էին Աբրահամ Յոր, և Տորիդ :

Հ. Սգաւոր ըլլալը ի՞նչ է :

Պ. Սգաւոր ըլլալը այն է, որ մարդու միշտ իւր անձը մեղաւոր ճանչնալով մեղքերուն վրայ զգուելով կը տրտմի : Դարձեալ աշխարհիս մնոտի ուրախութեանը չի փափաքիր՝ որ Երկնային անմահական ուրախութեան արժանանայ . ինչպէս որ կը պատուիրէ Պօղոս . « բառքիտենք որ աս մեր Երկրաւոր շինուած

տաճարը պիտի քակուի, Երկինքը Աստուծմէ շինուած առանց ձեռագործի աննման տաճար մը ունինք . ուստի ասկէ զգուած ենք . Երկինքի բնակութեանը կը բաղձանք . : Բ. կորն . Ե. Լ.

Հ. Արդարութեան համար անօթի ու ծարաւ ըլլալը ի՞նչ է :

Պ. Ինչպէս անօթի ու ծարաւ մարդիկը հային ու ջուրին կը փափաքին, անանկ ալ պէտք է որ փափաք ունենանք արդարութեան սրբութեան վրայ, և ծարաւի ըլլանք աստուածային լոյս տեսութեան : Ինչպէս որ Դաւիթ կը փափաքէր . և այս աղօթքը կըսէր « ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած հըզօր՝ և կենդանի, Ե՞րբ եկից Երկեցայց Երնսացդ Աստուծոյ . : Սաղ. ԽԱ. 2. : Դարձեալ սուրբ հոգւոյն զօրութեամբը այս ալ կը պատուիրէ . Երբոր Աստուծոյ գէմը արդարութեամբ Ելլամք, և անօր աստուածային անմահական փառքերը տեսնամք, այն ժամանակը պիտի կշտանամք : Սաղ. ԺԶ. 15. :

Հ. Աստուած Մովսէս մարդարէին ձեռքովը քանի պատուիրանք տուաւ . և ի՞նչ աւելցուց Քրիստոս անոնց վրայ :

Պ. Տասը պատուիրանք սուևաւ :
 Ա. Ես եմ քու տէր Աստուածդ՝ ինձ-
 մէ ուրիշ Աստուած չունենաս :
 Բ. Կուռք մի՛ չներ՝ ու անոր երկը-
 պագութիւն մի՛ ըներ :

Գ. Աստուածոյ անունը պարապ տեղը
 մի՛ տար . և սուտ տեղը երդում մի՛ ը-
 ներ : Բայց Քրիստոս պատուիրեց , ա-
 մենակին երդում մի՛ ըներ . ո՞չ երկինքին
 վրայ , և ո՞չ երկրիս վրայ , և այլն : Մատ .
 Ե. 34 : Որով կը պատուիրեմք՝ որ թէ
 տուատուրի մէջ՝ թէ՛ խօսակցութեան մէջ՝
 ամենակին երդում չընենք . Աստուածոյ
 անունը ոչինչ բանի համար չյիշենք .
 բայց գատաստանի մէջ գլխաւոր հար-
 կաւորած ժամանակը երդում ընելը ար-
 դիլուած չէ :

Դ. Շարաթ օրը սուրբ պահէ . որ է
 մարմնաւոր գործքերէ ետ կենալ , հո-
 գեւոր գործ գործել . բայց սուրբ առա-
 քեաները ի պատիւ Քրիստոսի յարու-
 թեան շաբաթը կիւրակիի փոխեցին . ին-
 չու որ Քրիստոս տէրը կիւրակի օրը յա-
 րութիւն առաւ : Վայ այն Քրիստոնէին՝
 որ դոնէ մէկ կիւրակի օրը սուրբ անմահ
 պատարազը կատարեալ չի աեմներ՝ և

ըեսը կը դարձունէ , իր մարմնաւոր կամ-
 քը կատարելու , կամ վաստակի ետեւէ
 կիյնայ . գիտցած ըլլայ՝ որ Աստուած-
 ալ անանկ մարդէն երեսը կը դարձունէ :
 Ե. Հայրդ ու մայրդ պատուէ . այս
 պատուէրովս կը պատուիրեմք մեր ծնո-
 դաց պատիւ տալ , հնագանդ ըլլալ , և
 հոգեոր ծնող քնուս՝ որք են առաջնորդ՝
 քահանայ՝ վարժապետ՝ ևայլն կատար-
 եալ հնագանդութիւն՝ յարգութիւն՝ և
 պատիւ ընել : Բայց կան ոմանք այնպի-
 սի ապատամք զաւակներ , որ իւրեանց
 ծնողքը չպատուելին զատ , սարսափելի
 հայհոյութիւններ ալ կընեն . չեն գիտեր
 թէ սուրբ գիրքը անանկներուն համար
 ինչ սարսափելի անէծք կուտայ . « Ո՞վ
 որ իւր հայրը մայրը հայհոյէ՝ աչքին բի-
 բը պիտի կուընայ՝ և լցուը պիտի խաւա-
 րի » : Առակ . Ի. 20 :

Զ. Մարդ մի՛ սպանաներ . և Քրիս-
 տոս պատուիրեց ամենակին չի բարկա-
 նալ . որովհետև սպանութեան արմատը
 բարկութիւնն է : Մատ . Ե. 22 : Ուստի
 Քրիստոսի պատուէրովը կը պարտաւո-
 րիմք մեր բարկութեան կիրքելը զապել՝
 համբերել՝ ներող ըլլալ : Վասն զի « մար-

դուն բարիութիւնը Աստուծոյ արդա-
րութիւնը չի կրնար գործել . կրսէ Յա-
կոր . կաթ . Ա . Գլ . 20 :

Ե . Ենութիւն մի՛ ըներ . այս խօսքին
մէջ ալ Քրիստոս պատուէր ունի մեզի ,
անառակ կեանքէ զգուշանալ և զգաստ
ըլլալ :

Բ . Մի՛ գողանար . այս պատուէրովս
կը պարտաւորիմք՝ առուտուրի մէջ խար-
դախութիւն չընել , պակաս չափով բան
չի վաճառել . խարդախ ստակ չի տալ ,
պարտքին աիրոջը պարտքը ամբողջ հա-
տուցանել և այն :

Թ . Սաւտ վկայութիւն մի՛ ըներ . այս
պատուէրովս կը պարտաւորիմք՝ թէ խօ-
սակցութեան մէջ՝ թէ՝ առուտուրի մէջ
ամենևին սուտ չի խօսիլ . ճշմարիտը գիտ-
նալ , խաթեր համար չի ստել , աւելի
դրամ շահելու համար անշահ բանը ա-
ղէկի տեղ չի վաճառել . ընկերոջը հետ
արդարութեամբ բաժին ընել . դատաս-
տանի մէջ կողմնապահութեան համար
խարէական վկայութիւն չի տալ և այն :

Ժ . Ընկերիդ ունեցած բանին մի՛ ցան-
կար . Այս պատուէրովս կը պարտաւո-
րիմք ուրիշին ունեցած բարիքները տե-

աաժ ժամանակնիս , մերը եղածի պէս
ուրախ ըլլալ և մեր ունեցածներուն վը-
րայ գոհ ըլլալ . որչափ որ Աստուած պար-
գեւեր է :

Հ . Այնպէս համառօտ պատուիրան
կայ որ զայն կատարելով բոլոր պատուի-
րանքը կատարած ըլլանք :

Պ . Այս՝ Փարիսեցիին մէկը երբ Քր-
իստոսի հարցուց թէ՝ վարդապետ ո՞ր
պատուիրանքը մեծ է . Քրիստոս անոր
սա պատուէրը տուտ : « Պիտի սիրես
քու տէր Աստուածդ . ըսաւ , քու բոլոր
որտէդ ու բոլոր զօրութենէդ , և բոլոր
մտքէդ . Ասոր նման պիտի սիրես քու
ընկերդ քու անձիդ պէս : Այս է մեծ ու
առաջին պատուիրանքը . ամէն օրէնք
ու մարդարէներուն խօսքը ասկէ կախ-
ուած է » . Ըսել կամի Քրիստոս՝ որ այս
երկու գլխաւոր պատուիրանքը պահէլով,
բոլոր պատուիրանքը կատարած կըլլաք .
Մատթ . իբ . 35 :

Հ . Ամէն քրիստոնեայ արքայութիւն
պիտի երթաւն :

Պ . Ո՛չ , լսէ՝ Քրիստոս ի՞նչ կը պատ-
ուիրէ Մատ . ի . 24 : Զէ թէ միայն ին-
ձի ամէն տէ՛ր տէ՛ր կանչողները արքա-

յութիւն պիտի երթան , հապա իմհօրս
կամքը ո՞վ ո՞ր կատարէ՝ այն պիտի մըտ-
նայ : Ըսել կամի թէ ո՞վ որ Աստուծոյ
պատուիրանքը կատարէ՝ այն արժանի
կըլլայ : Ինչպէս որ Պօղոս կը պատուիրէ
« Հայհայիշները՝ բամբասովները՝ գինե-
մոլները՝ և ուրիշ այսպիսի չարութիւն
գործողները՝ արքայութեան երեսը չեն
կընար տեսնալ՝ երբոր անզեղջ վախճա-
նին . միայն իրենց բնակարանը դժոխքն
է : Ա. Կոր . Զ. 9 :

Հ. Այժմ ննջեցեալներուն հոգիները
ո՞ւր են :

Պ. Կատարեալ արքոց հոգիքն հրեշ-
տակաց դառն են Քրիստոսի մօտը . ինչ-
պէս որ սուրբ Յովհաննէսին տեսիլքը
յայտնապէս ցոյց կուտայ : Յայտ . Դ. 2
3-7-9 Կայլն : Եւ Քրիստոս իւր սուրբ
կամքը կը յայտնէ այսպէս . « Հայր՝ ո-
րոնք որ ինձի տուիր , կամիմ՝ որ ես ուր
եմնէ՝ անոնք ալ ինձի հետ ըլլան , որ
իմ փառքս տեսնան » : Յով . Ժէ . 24 :
Ուրեմն Քրիստոսի կամքը կատարուած
է անպատճառ : Յաճա . 170 երես :

Հ. Միջակ արդարոց հոգիքը ո՞ւր են :
Պ. Միջակ արդարոց հոգիքն ալ երկ-

նից ներքեւը կըսպասեն՝ յոյս ունելով
հանդերձեալ դատաստանին՝ որ Ս. Եկե-
ղեցւոյ օժանդակութեամբ՝ աղօթիւք՝
և ողորմութեամբ , երինից սուրբ արքա-
յութեան արժանանան : Յաճա . 189 ե-
րես : Բայց անոնք որ անզեղջ անապաշ-
խար մահացու մեղօք լցեալ՝ յուսահա-
տութեամբ առանց խոստովանութեան՝
և առանց հաղորդութեան՝ մեռած են
նէ՝ շատ ողբոց և արտասուաց արժանի
են . վասն զի վերջին ժամանակը ծանր
պատիժ պիտի կրեն Քրիստոսէ . Յաճա .
189 երես : Որոց բնակութիւնն է խաւա-
րըն արտաքին՝ անդ եղիցի լալ և կրծել
ատամանց : Մատ . ԺԸ . 28 :

Հ. Արդարներուն և մեղաւորներուն
հոգիքը հիմակուընէ կատարելապէս
վառք և տանջանք ունի՞ն :

Պ. Այժմ արդարոց հոգիքը անմտ-
հական փառաց հաստատ յուսով միայն
ուրախութեամբ կըզմայլին . որ յետ դա-
տաստանին հոգւով մարմնով կատարե-
լապէս պիտի վայելեն . ինչպէս որ կը քա-
րոզէ Լուսաւորիչ : Յաճախ . 206 երես :
Եւ ինչպէս Յովհաննէս Յայտնութեան
աեսիլքին մէջ տեսաւ որ երկինքը սրբոց

Հոգիքը կը դոչէին թէ « Տէ՛ մինչև ե՞րբ
մեր վրէժը երկրէս չես առներ և այս երկ-
րիս բնակիչները չես դատեր և այլն : Յայտ
Զ. 9-10 : Մեղաւոր հոգիքն ալ այժմ մի-
այն անտանելի տրտմութեամբ կը տա-
ռապին կը տանջին . վերջին օրը կրելու
պատիմնին ստուգապէս գիտնալով՝ որ
յետ դատաստանին հոգւով մարմնով
կատարելապէս պիտի տանջուին : Ո-
ռովհետեւ իրենք հոգւով մարմնով գոր-
ծեցին չարը կամ բարին . վասնորոյ հոգ-
ւով մարմնով պիտի ընդունին իրենց
գործոց հատուցումը Քրիստոսի ձեռամբ :
ինչպէս որ առաքեալը կը քարոզէ . Ո-
րովհետեւ ամենք ալ Քրիստոսի ատեա-
նը պիտի ելլանք՝ որ ամէն մէկս մեր մար-
մինովը առաջուց գործածնուս փոխա-
րէնը պիտի ընդունինք թէ՛ չար՝ թէ՛ բա-
րի : Բ. կոր . Ե. 10 :

Հ. Արդեօք հոգիքը մարմիններէն
զատուելէն յետոյ հիմակուան պէս խօ-
սել իմանալ ունին :

Պ. Այդ հարցմանը պատասխանը Ա.
ուսաւորին հայրը շատ գեղեցիկ կը քա-
րոզէ . « Այժմ երկինքը սրբոց հոգիքը
կատարեալ իմացողոթիւն ունին՝ և ան-

ճառ փառաբանութեամբ՝ հրեշտակային
օրհնութեամբ՝ զԱստուած կը փառաբա-
նեն . ինչու որ աստուածային գիրքը
մարդկանց հոգւոցը համար կենդանի և
անմահ է կըսէ : Ժողով . Գ. Որովհետեւ
մեր հոգին է անմահ մտաւոր՝ բանա-
ւոր՝ երբ որ աս մարմինէն զատուի իմաս-
տից գիտութիւնները աւելի կը պայծա-
ռանայ, ինչու որ այս մարմինը ամսկի պէս
իմանալի տեսչութիւնները կը ծածկէ . . .
չե՞ս տեսնար որ հոգին ելածին պէս մար-
մինը բան մը շիմանար . ուրեմն բոլոր
զօրութիւնը՝ գիտութիւնը՝ կարողու-
թիւնը՝ հոգւոյն է և ո՛չ մարմնոյն : Յա-
ճախ . 205 երես : Եւ սուրբ Յովհաննէս
յայտնապէս տեսաւ որ սրբոց հոգիքը
աղաղակելով կը խօսէին Քրիստոսի հետ
Յայտ . Զ. 9-10 : Եւ Քրիստոս կը պատ-
րիէ . « Հոդին է կենդանարար մար-
մինը օգուտտ մը չունի : Յովլ . Զ. 64: Տե՛ս
հայր Արքահամու՝ Ղաղարոսի՝ և անո-
ղորմ մեծատան խօսակյութիւնները որ
մեռնելէն յետոյ ի՞նչպէս խօսակցեր են
միմեանց հետ : Ղուկ . ԺԶ. 24-21 :

Հ. Ի՞նչպէս պիտի ըլլայ վերջին դա-
ռապատանը՝ և այս աշխաք հին վերջը :

Այս աշխարհիս վերջնն ժամանակը ները՝ բոլոր քաղաքները՝ մեծամեծ շնորհածները՝ պիտի կործանին, անանկ ահագին շարժեր՝ կարկուտներ՝ կայծակներ՝ պիտի ըլլան որ՝ աշխարհիս մէջ բոլոր շնորհածները պիտի կործանին, էրին համանին։ Արեգակը՝ լուսինը՝ աստղերը՝ պիտի խաւարին։ այնուհեռուե երկինքը պիտի բացուի, նոր երկինք՝ նոր երկիք մը պիտի ըլլայ։ Եսայ. 42. 22. ԺԳ. Գլ. 6 համարէն մինչև 14 համարը կարդա՛ Յայտ. ԺԶ. մինչև վերջը կարդա՛։ Նախ Քրիստոսի կենարար Ս. Խաչը պիտի յայտնուի ։ արևէն եօթնպատիկ պայծառ լուսաւոր։ Մատ. ԵԴ. 30. Յետոյ Քրիստոս տէրը արդար դատաւորը պիտի իջնայ յերկնից հազարաւոր և բիւրաւոր հրեշտակներով, և երկնքի բոլոր սուրբերով, և լուսեղէն ամպերու վրայնը առած ։ Նախ հրաման պիտի ընէ հրեշտակներուն որ փողերը հնչուին, որ աշխարհիս չորս կողմը որչափ մեռած մարդկաննէ, բոլորը ողջնան։ Յօվել. Գ. 12-13-14. Դասի. ԺԲ. 2-3-4. Յօվ. Ե. 28. Յայտ. Զ. 15-16։

Հ. ի՞նչպէս յարութիւն պիտի առնեն

մարդիկը, կամ ի՞նչ տեսակի մարմառի պիտի գան։

Պ. Այդ հարցմանդ պատասխանը գեղեցիկ օրինակներով կը քարողէ Պօղոս։ Անմիտ, կըսէ, անհաւատից, քու յանած բանդ ինչ որ է նէ չի ողջնար։ Զէ թէ այն բուննելու բանը կը ցանես այլ մերկ հատ մը, և Աստուած անոր մարմին կուտայ, ինչպէս որ կուգէնէ . . . երկնաւոր մարմին ալ կայ, երկրաւոր այլ կայ, երկնաւորին փառքը այլ է, երկրաւորինը այլ է։ Արեգակին փառքը, լուսին փառքը, աստեղաց փառքը, այլ և այլ են. ասանկ ալ մեռեալներուն յարութիւնը պիտի ըլլայ. ապականութեամբ կը ցանուի՝ առանց ապականութեան կ'ողջնայ, անարդութեամբ կը ցանուի՝ փառօք կ'ողջնայ, տկարութեամբ կը ցանուի՝ զօրութիւնով կ'ողջնայ, շնչառոր մարմին կը ցանուի՝ հոգեւոր մարմին կ'ողջնայ, շնչառոր մարմին կայ նէ հոգեւոր ալ կայ։ Ա. Կորն. ԺԵ. Յօվէն մինչեւ վերջը ուշագրութեամբ կարդա՛։

Հ. Մեռելոց յարութեան վրայ ու ըլլէ վկայութիւններ ալ կայ։ Ս. Գրոյ մէջ,

Պ. Այս՝ շատ վկայութիւններ կան .
բայց բոլորը խօսել աւելորդ համարե-
լով , քանի մը հատը խօսինք . երջանի-
կըն Պօղոս Թեսաղոնիկեցինները գեղեցիկ
կը միմիթարէ՝ այսպէս քարողելով , եղ-
բայլներ , կըսէ , չեմ ուզեր որ ագէտ մը-
նաք ննջեցեալներուն վրայօք . և հե-
թանոսներուն պէս անոնց վրայ չարբա-
միք . եթէ կը հաւատամք որ Քրիստոս
մեռաւ ու յարութիւն առաւ . ասոր պէս
ալ բոլոր ննջեցեալները Յիսուսի ձե-
ռամբը յարութիւն պիտի առնեն : . . .
Այնուհետեւ ամպերով օդը պիտի յա-
փրշտակուինք , Քրիստոսի դէմը պիտի
ելլանք , և այնպէս ամէն ժամանակ մեր
տիրոջը քով պիտի մնանք : Այսուհետեւ
այս խօսքերով մէկզմէկ միմիթարեցէք :
Հոռով . Զ. 4 : Դարձեալ աւետիս կու-
տայ թէ . ինչպէս որ Քրիստոս մեռել-
ներէն յարութիւն առաւ , նոյնպէս մենք
ալ նոր կեանքի մը պիտի դառնանք » :

Հ. Այն մարդիկը որ ծովը խղդուեր
են , կամ կրակի մէջ երեր են , կամ դա-
զաններէ փարատուեր են . անսնք ի՞նչ-
պէս պիտի ողջննան :

Պ. Աստուծոյ առջեւ անհնարին բան

չիկայ . ինչպէս որ ոչինչէն ստեղծելու
կարող եղաւ , անանկ ալ կարող է բոլորը
կենդանացնելու . և ծովը ցամաքը բո-
լորը Աստուծոյ ձեռքն է : Լուսա . Յա-
ճախս : Ինչպէս որ առաքեալներուն
ըստու Քրիստոս . մեր գլխէն մէկ մազ մը
պիտի չի կորսուի : Ղուկ . ԻԱ . 18 :

Հ. Արդարներուն մարմինը ի՞նչ փառք
պիտի ունենայ և ի՞նչ կերպ պատիւ պի-
տի առնեն Աստուծմէ :

Պ. Քրիստոս Ա. Աւետարանին մէջը
մեղի կաւետարանէ . Մատ . 13-43 .
Արդարները արեգակի պէս այն ժամա-
նակը պիտի փոյլին արքայութեան մէ-
ջը . երկրորդ՝ հրեշտակի պէս թեթեւու-
թիւն մը պիտի ունենան որ կամքերնին
ուր ուզէնէ՝ հրեշտակի նման շուտ մը
թռչելով պիտի երթան : Երրորդ՝ ցաւ
հիւանդութիւն՝ տրտութիւն՝ և ամե-
նեւին կարօտութիւն մը պիտի չունենան :
Չորրորդ՝ Աստուծոյ ամենապատուական
երեսը աեմնալով , միշտ անպատմելի
ուրախութեան մէջ պիտի մնան : Տե՛ս
Ա. Կորին . ԺԵ . 42 :

Հ. Արդեօք բոլոր արդարոց փառա-
ւորութիւնը մի և նոյն կերպ է թէ միմ
եանց գերազանցութիւն ունի :

Պ. Այդ բանիդ օրինակը երկնից վը-
րայ յայսնապէս կերենայ, տե՛ս ա-
րեգակը, լուսինը, աստղերը. ի՞նչպէս
մէկըմէկէ աւելի գերազանց փառաւու-
թիւն ունին, այսպէս աշը բոլոր սրբոց և
սրբարոց փառքը՝ պսակը՝ իւրեանց
արդարութեան արդեանցը համեմատ
պիտի շնորհուի, ըստ արժանույն։ Յա-
ձախ։ 188. Երես։

Հ. Այն սոսկալի օրը սուբբերը ու
հրեշտակները մեղաւորներուն համար
բարեխօսութիւն պիտի ընե՞ն։

Պ. ԱՇ, քանի՞որ ողջ ենք՝ սրբոց բա-
րեխօսութիւնը Սստուած կ'ընդունէ,
երբոր մեղքերնուս վրայ զղջանք և ա-
պաշխարենք, նոցին բարեխօսութեամ-
բը մեղի կողորմի՝ և մեր իմսդրուած քը
կրկատարէ. բայց այն օրը ոչ բարեխօ-
սութիւն ընող մը կը գտնուի. և ոչ Քը-
րիուսա աէրն ալ մէկ մեղաւորի մը կո-
ղորմի. ամիշիանոս ծովուն չափ արցունք
թափիենք, գլուխնիս քարերով ծեծենք,
որքան ձայն ունինք նէ մեղոյ դաշենք.
ամեննեին օգուած մը ձար մը չի պիտի
դանենք, երբոր մեղաւորներուն մէջը
դանուինք, տե՛ս ի՞նչ իլու Զաքարիա

մարդարէն մեղաւորաց համար. Աստու-
ծոյ պատուէրը իրենք մտիկ չըրին, այս-
պէս ալ իրենք պիտի ազագակեն՝ Աստ-
ածած չի պիտի լոէ։ Զաքար, կ. 43.

Հ. Արդարները մեղաւորներէն ի՞նչ-
պէս պիտի զատուին. և ի՞նչ պիտի ըս-
տի անանց։

Պ. Այնուհետև հրաման պիտի ընէ
Քրիստոս հմբշաւակներուն, որ արդար-
ները աչ կողմը ժողվեն, և մեղաւորնե-
րը ձախ կողմը. ամէնուն դործած դործ-
քը յայանի պիտի ըլլայ. արդարին քա-
րեգործութիւնները, մեղաւորին չարա-
գործութիւնները երեան պիտի դան։
և դատաստան ըլլալէն յետոյ, նախար-
գաբնկրուն պիտի լոէ Քրիստոս. «Ե-
կէ՛ք իմ հօրս օրհննեալ զաւակները. վա-
յելլեցէ՛ք երկինքին արքայութիւնը. ին-
չու որ՝ անօթի էի՛ հայ տուիք ինձի,
ծարաւ էի՛ ջուր տուիք. հիւանդ էի՛
տեսնալու եկաք»։ անոնք ալ պիտի ը-
սեն. «Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզի անօ-
թի՛ ծարաւ եային, և այդ բարեգոր-
ծութիւնները ըլլիք»։ Յիւաւ ալ պի-
տի ըսէ անանց. «որովհետեւ ինձի հա-
ւատացագներէն պիտի մարդու մը ըրիք».

ինձի ըրած եղաք . . վերջը դառնայ
մեղաւորներուն պիտի ըսէ . . գացէք
ինձմէ անիծածնե՞ր , յաւիտենական կը-
րակին մէջը . ինչու որ՝ անօթի էի՝ հայ
չի տուիք , ծարաւ էի՝ ջուր չի տուիք .
մերկ էի՝ հագնելիք չի տուիք . . անոնք
ալ պիտի ըսեն . . Տէ՛ր , երբ տեսանք
քեզ անօթի , կամ ծարաւ , կամ մերկ ,
ու պէտք եղածը չըրինք . . պատասխան
պիտի տայ Յիսուս . . որովհետեւ պղտի
մարդու մը չըրիք . ինձի ըրած եղաք . .
յետոյ արդարները յաւիտենական կե-
նացը մէջ պիտի երթան . մեղաւորներն
տւ յաւիտենական տանջանքը : Մատ .
ին . 34 մինչև 46 համարը :

Հ. Մեղաւորները ի՞նչպէս դժոխք
պիտի երթան :

Պ. Քրիստոսի բերնէն այն սարսափե-
լի անէծքին ձայնը ելլալուն պէս՝ ամե-
նը մէկէն սատանաներուն հետ գետինը
պիտի անցնին . պիտի լեցուին դժոխքին
մէջը՝ ու անոնց հետ անտանելի չարշա-
րանքով պիտի տանջուին յաւիտենա
յաւիտենից . և ամենւին խալսելու ճար
պիտի չի գտնուի : Այս աշխարհիս մէջ
մարդ որ քան մեծամեծ տանջանաց

մէջ ըլլայ , և փրկելու յոյս մը չունենայ ,
որ մը կը մեռնիմ և կ'ազատիմ կըսէ ,
բայց այն ժամանակը շատ պիտի փընտ-
ուեն մեռնիլը ու չի պիտի գտնան . մա-
նաւանդ՝ որ կողմ դառնան նէ՝ իրենց
պատիմը պիտի գտնեն . մէկ կողմանէ
անմարելի կրակին սաստկութիւնը , որ
մինչև անդամ հոգին մարմիններուն հետ
պիտի էրի՝ ու մոխիր պիտի չըլլայ . միւս
կողմանէ տմենաշար ու գարշելի սատա-
նաները պիտի տեսնեն . ու անոնցմէ միշտ
անարգութիւն և պատիմ պիտի կրեն .
և ինչ պիտոյ է երկար խօսիլ . ահա այն
սատանաները որ հրեղէն են մարմին չու-
նին՝ ու տանջանք պիտի քաշն , Աստու-
ծոյ հրամանաւ . հապա մեղաւորները
ի՞նչպէս պիտի դիմանան . որ հոգւով
մարմնով պիտի տանջուին : Դանիկ . ԺԲ . 2:

Հ. Արդեօք դժոխքին կրակը իսկ և
իսկ կրակէ՝ թե այլաբանօրէն պիտի ի-
մանամք :

Պ. Որովհետև Քրիստոս Ս. Աւետա-
րանաւ շատ տեղ հուր անշէջ կըսէ՝ որ
ըսելէ անմարելի կրակ . ուր որիմն նո-
րա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շինանի . .
Մարկ . Թ. 43 : Եսայ . ԿԶ . 24 : Աւետի

հարկ է որ սպառդապէս սոսկաւի կրտել
ըլլալը հաւատանք, և ոչ այլարանու-
թեամբ :

Եւ որովհետեւ ամեն դատապարտեալ-
ները հոգւով և մարմնով մեզանչցին շ
անոր կամար երկու կերպ պատիժ կայ
դժոխքն մէջ պատիժ վնասու պա-
տիժ զդայութեան :

Պատիժ մնասու ըսուածը, որ մեծա-
մեծ պատիժ է, Աստուծոյ լոյս տեսու-
թենէն յաւիտենական զրկուիլն է :

Պատիժ զդոյութեան է յաւիտենական
տանջանք մարմնաւոր, որ բալոր տաշ-
րերքներէն պատրաստած է Աստուծ
սատանային՝ և անոր կամակից եղրզնե-
րուն : Մատ . իԵ . 41 :

Հ. Ս. Գիրք կը վկայեն թէ Քըիտոս
երբ որ մարմնովը թաղուեցաւ, հոգ-
ւովը գժոխքը իջաւ, քակեց . ուրեմն
այսուհետեւ դժոխք չիկայ : Պօղ . Եփե .
գ. 9 : Ա. Կաթ . Պետ . գ. 19 : Սաղմ.
կ. 49 :

Պ. Երկրիս ներքել բանտ մը իսր .
որ բալոր մարդարէից նահապետայ ար-
դարոց հոգիները սկզ բնական մեզայ
կամար հնա արդիուած սատանային գե-

րի եղած էին . առանց տանջանաց . այս
բանաը իջաւ Քըիտոս հոգւով, քակեց,
սատանան խայտառակեց, և սոյն հո-
գիները աղատեց, և ոչ իսկ գժոխքը
և այս տեղու գոր Աբրահամու ալ կը կո-
չի, ինչպէս որ աղքատ Ղաղարոս ալ
հնա գնաց, բայց անողորմ մեծ աւտունին
տեղը հաստատ կեցած է . և պիտի մը-
նայ յաւիտեանս յաւիտենից : Ղու . ԺԶ.
22 . որ է տանջանարան դիւաց և մե-
զաւորաց :

Հ. Գժոխքը Աստուծած որի՞ համար
սահմանեց :

Պ. Սատանաներուն համար սահմա-
նեց, ինչու որ անոնք առաջուց Երկին-
քին մէջը պատուաւոր հրեշտակ էին,
իրենց լուսաւորութիւնը տեմնելով հը-
պարացման, աստուծած անալ կամեցան:
Եսայ . ԺԴ. 12-13 : Ղուկ . Ժ. 18 : Աւա-
տի Աստուծած ալ բարիկացաւ ան դապր
ամէնը մէկէն երկինքէն վար թափեց, և
գժոխքը անոնց բնակարան սահմանեց .
որ աշխարհիս վերջը իրենց մեզայ տա-
տիժը կրեն յաւիտեան : Մատ . իԵ . 41 :

Հ. Հապա մեղաւորները ինչու գը-
շունը պիտի երթան :

Պ. Որովհետեւ մեղաւորներն ալ Աստուծոյ կամքը չի կատարեցին՝ սատանային կամքին հետեւեցան . անզեզ անապաշխոր մեռան , անոր համար անոնք ալ պիտի երթան անոնց հետ տանջանք քայլելու . Մատ . իշ . 46 :

Հ. Արդարները ի՞նչպէս պիտի երթան նրկից արքոյութիւնը :

Պ. Սուրբերան հրեշտակներան և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հետ՝ մեծ ուրախութեամբ երկինքը պիտի վերանան . և առ ըստ արքոյութեան մէջ անգատմելի ուրախութիւնը պիտի վայելեն յաւիտեան , և այն ուրախութեանը համար մէկ օրինակ մը չի գտնելով այսպէս կըսէ Պողոս տռաքեալը . « որ ո՞չ աչքէ տեսեր . ո՞չ ականջէ լոեր . և ո՞չ մորդու միտքէ ինկեր . անսնկ փառք մը պատրաստերէ Աստուած իր սիրելիներան » : Ա. Կորն . Բ. 9 : Եսայ . Կի . 4 :

Հ. Ի՞նչ ընելու եմք՝ որ ան սարուափելի գժոխքէն ազատիմք , ու սուրբ արքոյութեան փառաց հասնիմք :

Պ. Երկու բան պէտքէ . մէկ մը Աստուծոյ ատուի պրանքները կատարել . Փրկրորդ բարեգործութիւն ընել . ահա

այս երկու բանէն մէկը պակաս ըլլայնէ . չես կարեր արքոյութիւն երթալ . ինչպէս այն մեծատունը Քրիստոսի հարցուց թէ . բարի՛ վարդապետ , ի՞նչ ընեմ որ յաւիտենական կետնքը վայելեմ : Մատթիո . 16 : Պատասխան տուաւ Քրիստոս թէ . պատու իրանքը զիսես , մի շնար , մի գողանար և այլն » : Անոնք ըստ մեծատունը պղտիկութենէս մինչև հիմոց պահեր եմ . գարձաւ Քրիստոս բարեգործութիւն ընել սորվեցաց անոր . ըսելով թէ . « գնա՛ ինչ որ ունիս վաճառէ աղքատներան ողորմութիւն տռ’ը . իմ ետեկս եկուր » . առ որ ընէր՝ Քրիստոս իրեն աշակերտ պիտի ընէր . բայց մեծատունը աւելի արծաթաէր ըլլալով , Քրիստոսի պատուէրը մտիկ չըրաւ . ձեռվ մը աներեւոյթ եղաւ Քրիստոսի առջեւէն : Ա. Փառն անմառ թեանը՝ որ Քըրիստոսի կոչմանը չի հաճեցաւ տիրովմէն երես գարձուց . անցաւ որ փառքերուն ետեկն դնաց . տեսա՛ր որ միայն մեղք չի գործելով այն յաւիտենական փառքը չենք կարեր հասնիլ . հապա բարեգործութեան պտուղ ալ պիտի ունենանք . տե՛ս բարեգործութիւն չունե-

չ. Պահճը պահճելէն ի՞նչ պառող կը ըստ
տառանք և ովկ սորվեց մեզի :

Պ. Ահա նախե առաջ Աստուած Ադա-
մին պահճ դրաւ դրախտին մէջը ապօ-
պրեց որ, ամէն ծառին պառողէն ուտէ,
բայց բարին ու չարը գիտնալուն պառ-
ողն չուտէ : բայց Ադամ այն պահճը չը-
բոհեց, անոր համար այն աննման պար-
տիզն գուրս վռնտուեցաւ . ուստի Քր-
իսասոստէրը քառասուն օր պահճեց . Մատ-
Գ. 2: Եւ սորբաղն առաքեալներուն ձեռ-
քովը մեզի ալ պատուիրեց պահճ պահճել :
Մատ. թ. 13: Կարդա՛ Յաճախ. 104 Երե-
սէն : Տի՛ս Ս. Լուսաւորիչ հայրենիս հոգ-
ով սրբով ի՞նչ պատուական պատուէր-
ներ կուտայ : Բայց պահճեցողութիւնը ի՞նչ
կերպ պիտի ըլլոյ որ Աստուած ընկու-
նէ, կարդա Եռայ . Ծթ. 3 համարէն :

Հ. Ո. Կարապետին աշտկերտները
պահճ կը պահճին . բայց Քրիստոսի տ-
շակերտները քանի որ Քրիստոս մէջեր-
նին էր ինչո՞ւ չէլու պահճեր : Մատ. թ. 14:

Պ. Այդ հարժմունքիդ պատասխանը
Քրիստոս այսովէս կը պատուիրէ . « Հր-
եար է որ հարսնեւորները սուդ պահճն
քանի որ վեհապէն մէջերնին է . բայց ժա-

ցող մարդուն համար ի՞նչ առակ կը ըստ
բուցէ Քրիստոս Ս. Աւետարանին մէջ .
« մարդ մը, կըսէ, իր պարտիզին մէջ թը-
զենիի ծառ մը ունէր . երեք տարի ըս-
պասեր է որ պատուղ տայ և չէ առեր .
դարձեր պարտիզպանին ըսեր էթէ՝ կըտ-
րէ այդ ծառը . ինչո՞ւ երկիրս կը խա-
փանէ . ասանկ ալ կըսէ « ան ամէն
ծառերը որ պատուղ չի բերեն՝ կը կարուի
կրակը կը ձգուի » : Դակ ժ՞ 6: Ա-
հա պարտիզը այս աշխարհսէ . ծառը
մենք ենք . պարտիզին տէրն Աստուած
է . պարտիզպանիները հրեշտակներն են :
Աստուած երբոր կը աեսնէ որ ժամա-
նակինիս անցերէ, բարեգործութեան պր-
տուղ բերածնիս չկայ, այնուհետև հը-
րաման կրնէ հրեշտակն այսպէս . կըտ-
րէ՝ այդ մարդուն կեանք, ու յափառ-
նական կրակին մէջը ձգէ, ինչո՞ւ աշ-
խարհիս մէջը ոչինչ աեզր կեցեր է :

Հ. Բարեգործութեան պատուղը ինչո՞վ
կը ըստ :

Պ. Արբանը որ Աստուածոյ համար Գոր-
ծենէ, բարեգործութիւնէ, բայց Գոր-
ծիս որապէս երեք բանով կ'ըստ : պահ-
ճը, աղօթքը, ողբուժութիւնը :

մանակը գայ, երբեր փետան մէջելմուն
ելլայ՝ այնուհետեւ պիտի պահեն » : Ը-
սել կամեցաւ թէ՝ ես երբ որ երկինքը
համբառնամնէ՝ առաքեալներս ալ թող
պահեն . ուստի առաքեալք շատ ժամա-
նակ կը պահէին յետ Քրիստոսի համ-
բարձմանը : Գործ . ՃԳ. Յ. Բ. Կորն . Զ.
5: ԺԱ. 27: Եւ Ս. Յօհաննու ձեռամբ պա-
հել և ապաշխարել կը պատուիրէ Քրիս-
տոս մեղաւորաց : Յայտ. Գ. Յ:

Հ. Աղօթք ընելէն ի՞նչ պտուղ կըս-
տանանք, և ո՞վ սորվեցաց մեզի :

Պ. Ի՞նչպէս պատմեմ աղօթքին ար-
ուած պտուղին պատուականութիւնը .
ահա ո՞րքան սուրբեր կան՝ որ հոգւով
արբով լորեցան, և երինային վառաց
արժանացան, ըստ մեծի մասին ջերմե-
ռանդ աղօթներով արժանացան . շատ
մեղաւորներ մեղքէ աղաւորացան, ու ար-
գարացան . տե՛ս աջակողմեան աւաղա-
կը՝ փոքր ինչ աղօթքով Քրիստոսէն թո-
ղութիւն առաւ, արքայութեան արք ա-
նացաւ . Ղուկ . ԻԳ. 42: Դաւիթ մար-
գարէն մեղանչելով՝ յետոյ մեղայ տէրն
գոչելով՝ և Ոլորմեան ինձ Աստուածը բ-
անով, մեղացը թողութիւն առաւ,

Ե. Թաղա . ԺԲ. 13: Կուռնելիոս հա-
րիւրապեաը որ հեթանոս էր աղօթքով
ու ողորմութեամիը՝ Աստուծոյ հրեշտա-
կը տեսու՝ և քրիստոնեայ եղաւ, Պետ-
րոս տռաքելցին ձեռամբ . Գործ . Ժ. 4:
Ի՞նչպէս կարաղ եմ մի ըստ միոչէ պատ-
մել ջերմեռանդ աղօթքին մեծամեծ զօ-
րութիւնները . որբաց պատմութեան զըր-
քերը կարդա՛, որ քաջ աեղեկանաս :
Տե՛ս բարեպաշտ Տօրիթը որ իւր ջերմե-
ռանդ աղօթներով և բարիդործքերովը
Ռուփոյէլ հրեշտակապեաը տեսաւ, և
անոր ձեռօք շատ բարութիւն գտաւ :
Կարդա՛ Աստուածաշունչը Տօրիթ Ե.
զըրւսէն մինչև ԺԲ. Պլուխ . ուր տեղ
Ռուփոյէլ հրեշտակապեան ալ կը պատ-
միրէ թէ . բարի են աղօթք՝ պահօք՝
ողորմութեամբ և արդարութեամբ :
Տօրիթ . ԺԲ. 8:

Հ. Քրիստոս մեր վրկիցը ի՞նչպէս ա-
ղօթք կ'ընէր, և ի՞նչ աղօթք սովեցաց
մեզի :

Պ. Շատ ժամանակ ցերեկը անապառ ը-
կ'երթար, զիշերը մինչև լոյս աղօթք կը-
նէր մեզի օրինակ ըլլալու համար : Ղուկ .
Զ. 18: Ժ. 12-28-29: Եւ սուրբ առաքելցոց

ինդրանօքը « Հայր մեր » աղօթքը սոր-
վեցուց «որ տերունական աղօթք կը-
ուի» . Յետոյ սրբազն հայրապետները
սուրբ հոգուց զօրութեամբը պատուա-
կան աղօթքներ սահմանեցին որոց գլո-
խաւորն է « Հաւատով խաստովանիմ » . ո-
ւըն որ ամէն քրիստոնեայ պարտաւոր է
բնիան գիտնալև ասել . և Քրիստոս աշ-
րը կը պատուիրէ մեզ թէ . « Զգուշ կե-
ցի ք անձեռնուդ վրայ , չըլլայ որ սուտել
խմելու , արբեցութեան , և աշխարհին
հոգեբռնւն մէջ ի խալով , ձեր սիրտը ծա-
նըրնայ . ու յանիկարծակի մահուան օրը
ձեր վրայ գայ , ինչու որ բոլոր մարդ-
կանց վրայ որսդայթի պէս պիտի համնի :
Ալթուն կեցէ ք այսուհետեւ , ամէն ա-
ղօթք ըրէք , որ աս ամէն բանէն աղա-
տելու արժանի ըլլաք » . Ղուկ . իլլ . 34-
35-36 :

Հ . Աղօթքը քանի կերպ է . և ի՞նչ
պէտք է աղօթքի կայսիլ :

Պ . Աղօթքը երեք կերպէ . աղաւանք ,
խնդրուածք , դաշութիւն . աղաւանքը
այն է , որ մեզքերաւդ թողութիւն ըն-
դրունիրաւ , և դժոխքին տանիստին ու-
զատ մնալու համար Աստուծոյ կաղաքաւու .

ինդրուածքը այն է , որ Աստուծմէ սուրբ
արքայսւթիւն և կամհոգեոր բան մի կը-
խնդրես . չըլլայ որ մարմնաւոր բան խնդ-
րես , ինչու որ չի խնդրած ալ կուտայ .
ահա Քրիստոս տէրը կըսէ . « ուտելիքի՝
խմելիքի՝ հագնելիքի համար հոգ մի՝
ընէք . այն ամէնը պէտք ըլլալը ձեր
հայրը գիտէ . ատոնք հեթանոսները կը-
խնդրեն » : Գոհութիւնը այն է , որ Աս-
տուծմէ շնորհակալ կըլլաս , ամէն ունե-
ցածներուդ համար , թէ՛ հոգեսոր՝ և թէ՛
մարմնաւոր . և միշտ փառք կուտաս , որ
քեզի պարգևեր է : Երբոր աղօթքի կը-
կայնիս , նախ միտքդ Աստուծոյ պիտի
տաս , անանկ գիտնալով որ Աստուծած
դիմացդ կեցեր է՝ մտիկ կ'ընէ քեզի :
Երկրորդ՝ այնպէս փափաքով՝ ու սրտի
կամօք պիտի կենաս , որ սրտիդ փափա-
քէն աչքերդ պիտի լենայ . որ Աստուծած
քու սրտիդ բաղձանքը նայելով՝ քու ա-
ղօթքդ և աղաւանքդ ընդունէ : Ա . Տի-
մոթ . Բ :

Հ . Քանի բան պէտք է որ աղօթքնիս
Աստուծոյ ընդունելի ըլլայ , և մեր խըն-
դիրքը կատարէ :

Պ. Երեք. անեկմիտ հաւատաք. ճշշմարիտ խոնարհութիւն և երկիւղածութիւն. աներկմիտ հաւատաք ըսելով՝ պիտիս խմացիր. որ Աստուծմէ ինդերք մը ըրած ժամանակիդ առանց երկբայութեան պիտի հաւատասա. որ ինդերքդ կամ ուշ կամ շուտ անպատճառ պիտի կատարուի. ինչպէս կըսէ Քրիստոս. «ազօթքի ժամանակը հաւատով ինչ որ Աստուծմէ ինդերէք կառնէք. Մատթ. ԻԱ. 22:

Երկրորդ՝ ճշմարիտ խոնարհութիւն պիտի ունենանք. որուն համար Գաւիթ ժարգարէն կըսէ. «Հայեցաւ տէր յազօթս խոնարհաց. և ո՛չ արհամարհեաց դինդրուածս նոյցա»: Սաղ. ՃԱ. 16:

Երրորդ՝ Երկիւղած պիտի ըլլանք. այսինքն ամէն ժամանակ Աստուծոյ ահը. Երկիւղը՝ որտերնուս մէջ պիտի ունենանք. որ Աստուծած ալ մեր կամքը կատարէ. մեր ազօթքը լսէ և յաւիտենական կենաց արժանի ընէ. ինչպէս որ մարգարէն կըսէ. «Երկիւղած մարդուն կամքը տէրը կը կատարէ. անսնց ազօթքը կը լսէ. և մերին կենաց ալ արժանի կընէ»: Սաղ. ՃԽԴ. 20:

Հ. Ոլդրմաւթենէն ի՞նչ պոտող գուտանանք. և ո՞վ սորվեցուց մեղի. Պ. Ահա՝ ողորմաւթիւնը ամէն բարեգործութիւններէն աւելի դատաստանին օրը մեղի օգնութիւն պիտի ընէ. ինչպէս որ առաքեալը կըսէ. «ողորմութիւն բարձրագլուխ պարծի առ դատաստանաւ: Բակ. Բ. 13: Եւ Քրիստոս Աստուծած արդարները արքայութեան կոչելու ատենը. միայն ըրած ողորմութիւննին պիտի միչէ ըսելով. «անօթի էի. հայ տուիք. ծարու էի. ջուր տու իք. մերկ էի. հադնելիք տուիք և այլն. Մատթ. իե. 33: Տե՛ս ողորմաւթիւնը ինչպէս Աստուծոյ ընդունելի է. որ Քրիստոս իրեն ըրած կը համարի. ինչ որ կարօտեալներուն կընենք: Գարձեալ երանութիւն կուտայ ըսելով. երանի՛ ողորմաններուն՝ ինչու որ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն. Մատթ. Ե. 7: Գարձեալ կը պատուիրէ. «Ճեր գտնձը Երկինքը գիզեցէք. այն տեղը՝ ուր ո՛չ գող կը մօտենայ և ո՛չ ցեցերը կ'ապականեն»: Մատթ. Զ. 20: Ահա՝ Երկինքը գիզելը ի՞նչ է. որտի կամօք. զուարիծերեսօք ողորմաւթիւն տալի է. կարդուեսպ. ԾԲ. 7:

Հ. Այսառաքինութիւնները ծածուկ
գործելու է, թէ յայտնի :

Պ. Քրիստոս տէրը մեզ կը պատուի-
թէ թէ, այս ամէնը ծածուկ գործէ, որ
երկնաւոր հայրը, յայտնապէս պիտի
հատուցանէ : Մատ . Զ. 4 : Բայց հար-
կաւորած ժամանակը, ուղիղ դիտաւո-
րութեամբ մը, այսինքն փառաւորու-
թեամբ չէ՝ այլ ուրիշն բարի օրինակ ըլ-
լալու համար՝ յայտնի գործես նէ, ան ալ
Աստուծոյ հաճոյ և ընդունելի է . որով
Հայր Աստուծուծ կիսուաւորի . ինչպէս որ
կը պատուիրէ Քրիստոս « ձեր բարեգոր-
ծութեան լիցը այնպէս պայծառ պիտի
փայլի, որ ամէն մարդ ձեր բարի գործ-
քերը տեսնելով, ձեր երկնաւոր հայրը
փառաւորն : Մատ . Է. 16 : Ա. Կաթ .
Պետ . Բ. 12 :

Ա. Դ. Թ. Ք

ԱՍՏՈՒԾՄԷ ՇՆՈՐՀՔ ԽՆԴՐԵԼՈՒ

Արարիչ իմ և Տէր քոյին ամենատես
աչօք նայէ անդամմը երկնքէն դէպ յա-
նարժանութիւնս, որ ձեռքերս բացեր,
աչքերս դէպ ՚ի երկնքը վերցուցեր

այս առջայութեան հասակիս մէջ՝ սրտիս
սէրը բոլորովին քեզի տալով, կը խընդ-
րեմ մեծաւ պաղատանօք, քու Աստուծ-
ային ոուրբ շնորհացդ փափաքելի ծա-
ռադայիթները ծագէ՝ անարժան սրտիս
մէջ, որ սրբաբար շնորհացդ զօրութեամբ
կարող լինիմ ազատ մնալ ամէն աղտեղի
խորհուրդներէն : Վասն զի՝ առանց շը-
նորհացդ ոչինչ եմ, մանաւանդ՝ բարի և
քեզ հաճելի գործ մը չեմ կընար գոր-
ծել, և քեզի սիրելի ըլլալ . զի բոլոր
սուրբերը քու շնորհներովդ բարիս գոր-
ծեցին, իրենց սէրը բոլսրով սրտիւ քե-
զի մատուցին, և քեզի սիրելի եղան :
Քաջ գիտեմ և հոգեկեցոյց պատուէրնե-
րըդ ուսաց . որ ամէն առաքինութենէն
յառաջ, մեզմէ կատարեալ սէր կուզեն .
և որչափ մեր սրտին սէրը դէպ ՚ի քեզ
առատ տեսնաս, այնչափալ զմեդ կըսի-
րես . և Աստուծուածոյին շնորհներդ առա-
տօրէն կը պարզեւս . վասնորոյ, անար-
ժան հողա՝ մոխիրս՝ ահա մանկական հա-
սակէս սկսեցի, քու սիրովդ բորբոքիլ .
իմ փափաքս՝ իմ սէրս՝ ամէն բանէն ա-
ւելի, Աստուծուծ իմ Յիսուսօ՝ քեզ կը մա-
տուցանեմ լիտին : Ահա՝ Երջանիկ սուրբ

Գրիգոր Նարեկացւոյն աղաւանքին ձայն
նովից ըլլալով, երես գետինը տարա-
ծած, աչքերս արցունքով լեցած՝ սըր-
տիս սաստիկ սիրոյն բորբոքելէն՝ բեր-
նիս ջուրերը ցամքած՝ ողբալով աղա-
շեմ. առ զաւանդ մաղթանացս, և տուր
զողորմութիւն քո շնորհացդ, և քեզ վա-
յելէ փառք յաւիտեանտ ամէն:

Յ Ա Բ Դ Ո Բ Ա Կ

Ահա՝ լեցիր և իմացար՝ Քրիստոսի
պատուէրները ըստ բաւկանին. այսու-
հետեւ ջանք ըրէ՛, տղօթք ըրէ՛, աղա-
շանօք խնդրէ՛, որ շնորհօք Ս. Հոգւոյն
կարող ըլլաս այս պատուէրները կատա-
րել, որ քու անունդ ալ դպրութեան
կենաց մէջ գրուի երկինքը, ինչպէս Քը-
րիստոս աշակերտացը յայտնեց. «մի՛
խնդայք՝ որ գեերը ձեզի կը հնազանդին,
հագա խնդայէք՝ ուրախ եղիք որ ձեր
անունը երկինքը գրուած է»: Ղուկ.
Ժ. 20: Աւրեմն որչափ գիտուն ըլլաս,
որչափ առաքինի, որչափ արդար, որ-
չափ բարեգործ, որչափ մեծատուն, որ-
չափ պատուաւոր, որչափ երեելի իշ-

խանաւոր, ամենեին անոնց վրայ մի՛
խնդար՝ մի՛ ուրախանար. ինչու որ այն
ուրախութեանը յետոյ գուցէ հպարտու-
թիւն մը դայ, որով մեծ վնաս կը ծագէ
հոգւոյդ և մարմնոց. Ա. Ա. միայն ջանա-
որ Աստուծոյ սիրելի ըլլաս, Աստուծոյ
կամքը սորվիս մոքով, կատարես դործ-
քով, որ Քրիստոսի ձեռքը քու վրայէդ
պակաս չըլլայ. նայէ՛ տե՛ս Քրիստոս տա-
ճարին մէջ քարոզ տուած ժամանակը
ինչ կընէ. երբ կըսեն թէ « մայրդ քեզ
կը վնատէ, երկնցաւ իւր անարատ ձեռ-
քը քարոզ մափկ ընողներուն վրայ գը-
րաւ. « ահա՝ ըստ իմմայրս՝ իմեղբայր-
ներս՝ ով որ իմ հօրս կամքը կը կատա-
րէ՝ իմ մայրս՝ քոյրա՝ եղբայրս ան է »:
Մատ. Ժ. Բ. 47. մինչեւ 50:


Երբ որ Քրիստոսի այս պատուէրները
սորվիս, ու գործքով չկատարես՝ անհո-
գութիւն ընես, տե՛ս ի՞նչ կը պատուի-
րէ Քրիստոս. « ով որ իմ խօսքերս կը
լսէ ու գործքով կը կատարէ՝ կը նմանի
այն իմաստուն մարդուն, որ իւր տունը
վիմին վրայ կը շնէ. որչափ անձրև դայ՝
որչափ հողմը ըլլայ՝ չի կործանիր. և ով
որ իմ խօսքերս լոէ՝ ու գործքով չի կա-

տարէ , կը նմանի այն յիմար մարդուն
որ իւր տունը աւազի վրայ կը շնէ . եր-
բոր անձրեսները՝ հովերը ելան զարկին
տանը՝ մեծ կործանում եղաւ . : Մատ .
Ե. 24 :

Այս տունը մեր հոգւոյն տունը պիտի
իմանանք, անոր կործանումն ալ յայտնի
է, որ ինչպէս անտանելի պիտի բլայ .
Երբ որ Քրիստոսի պատուելներուն չի
հնաղանդինք, մարդասեր Յիսուս, տառ
ցէ մեզ հոգի գրաստութեան՝ հոգի գիւ-
տութեան՝ և աստուածակաշտութեան,
ամէն :

ցընչ կուտաք ու խուսիք ու զիմ
ու ծան ականանի խոցեր ու տափառ
պատճեն ու լու ու ծան ու զիմ կար
ու աղջուան և **կ ե թ զ**, առանցք Տի
հովան ու Տիգան ու խոցեր ու Հու
ու մաս զիմ ու անընդ համարներ կըն
կը ծան պատճեն և անընդ պատճեն
կա և ա զիմ աղջուան պատճեն ու անընդ
պատճեն ու անընդ պատճեն ու անընդ

3249



Հայոց գրադարան



NL0030023